Գերարգելոյ և զերիմաստի տեառն տեառն

Մխիթարայ Աբբայի

Ցայտ առնեմ բազմաւ սիրով, ի փետրուարի 13, մայրն իմ անկաւ ի մահիճս ծանր ցաւագնութեամբ և տագնապիւն յոյժ՝ ոչ ունելով զհանգիստ։ Ի չորրորդում առաւօտոջն՝ մինչ հայցէի ներ պատարագին այցելութիւն իմն ի Տեառնէ, իսկոյն եկն ի միտ իմ արագահաս օգնութիւն սրբոյն Փիլիպոսի Ներէի և աւարտեալ զպատարագն՝ դարձայ փութով ի տուն, և պատմեցի համառօտաբար մօր իմոյ զերիս կամ զչորս հրաշս բժշկականս ի նոյնոյ սրբոյն արարեցեալս, որովք բորբոքեցաւ դէպ առ նա ջերմեռանդութեամբ։ Ցետ յայսորիկ ծարաւեցեալ խնդրեաց զջուր, առ ժամայն բերեալ զմասնիկ սրբոյն՝ զոր ունէի, չօշափեցի նովաւ զջուրն բաժակին, և մատուցի ասելով. Նախ ասա զմի հայր մեր և ողջոյն, և ապա յանձն արա զքեզ հոգաբարձութեան սրբոյն, հայցելով զի լինիցի վերակացու քեզ ի նեղութեան քում և օգնական, զի թէ օգտակար իցէ քեզ ապրիլն ժամանակ ինչ և հաճոյ կամացն Աստուծոյ՝ ընկալցի միջնորդութեամբ իւրով վասն քո՝ զչնորհն առողջութեան փութով. բայց թէ հաճոյ իցէ տեառն՝ կոչել այժմ զքեզ առ ինքն, ընկալցի նոյնպէս միջնորդութեամբ իւրով՝ զչնորհն այն փութով։ Զայս լուեալ՝ կալաւ զբաժակն ի ձեռին, արար զայն ամենայն՝ ջերմեռանդ սրտիւ և էարբ հաւատով։ Իբր էանց ժամ մի, սկսաւ քրտնիլ, որով եղև դիւրութիւն մեծ և հանդարտեցաւ փոքր ինչ ի վշտալի տառապանացն, և յուսով առողջութեան էկաց աւուրս Ե, և երեկոյին այնորիկ եկն Սուգիաս Եպսն. այց առնել զնա, և խոստովանեցուցեալ մխիթարեաց բանիւք ոգևորականօք և գնաց։ Արդ ի գիշերին այնմիկ կացի ես առ նմա ի ծառայել, և ի չորրորդ պահու գիշերոյն ասէ ցիս. Տուր ինձ զխաչն՝ յորում իցէ մասն սրբոյն։ Իբրև մատուցի կալաւ երկոքումբք ձեռօքն, համբուրեաց երիցս, եդ ի վերայ աչացն և երեսացն ասելով. Սուրբդ Աստուծոյ հաս ինձ օգնութիւն ի նեղութեան իմում, և տուր ինձ հանգչիլ սակաւ մի քնով, զի ոչ կարեմ այլևս դիմանալ։ Զայս ասացեալ ետ ինձ զխաչն և ընկողմանեցաւ։ Ի մէջ գիշերին էկաց առ նմա տէր Օհանն ի ծառայել, և ես գնացի ի ննջել։ Իններորդ ժամուն խնդրեալ զսակաւ մի ապուր և կերեալ է ձեռամբ տէր Օհանին։ Մեծասանին՝ հայցեալ է զանօթ օրհնեալ ջրոյն, համբուրեալ մեծաւ ջերմեռանդութեամբ և մատամբ իւրով սրսկեալ է զդէմն, զկոկորդն և զկուրծն, և տուեալ զանօթն՝ ընկողմանեալ է ասելով. Յիսուս, Մարիա, և այլն, քանի մի անգամ։ Ցետ պահու միոյ աղաղակեալ է. Հասի՛ր տէր Օհան, զի մեռանիմ աւասիկ։ Եւ նա դիմեալ առ նա ասելով. Զի՞նչ խնդրես. ասացեալ է թէ կալ զծածկոցն զի դառնայցեմ ընկողմանիլ առ միւս կողմն. զկնի դառնալոյն կացեալ սակաւ ինչ՝ աւանդեալ է զհոգին իւր ընդ լուսանալ շաբաթուն, խաղաղական մահուամբ ի ձեռն ստեղծողին իւրոյ։ Եւ ընդ լուսանալ միաշաբաթին՝ բարձին զնա և տարան յեկեղեցի Հոգւոյն Սրբոյ, ուր զկնի պատարագացն՝ թաղեցին առաջի սեղանոյ երանեցեալ կուսին։ ...

Գերարգելութեան քում Նուաստ ծառայ

Գրեցաւ 1726 *Յոնան Եպս. Սեպաստիոյ*
Ի Մարտի 9

L.

Թէ՛ քաղաքական և թէ հայ եկեղեցական պատմութեան մասին հետաքրքրական անցքեր կը պարունակէ Վարդերեսեան Հ. Միքայէլ Վ. Սեբաստացւոյ հետևեալ նամակը։